« 12 » հունվար 2026թ. No 100 - Ա

«ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ

Ծրագրային հղումը՝ Edu.liamed.am

«ԼիաՄեդ» ՍՊԸ

- Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 15 ինքնակրթության կրեդիտ
- Կոնտակտ liamedclinic@gmail.com

Պարտադիր բաղադրիչ (100 էջ տեքստ, 1.5 ժամ փոդքասթ, 20 րոպե վիդեոխնդիրներ)

1) Բուժաշխատողի էթիկական պարտականությունները. պացիենտների նկատմամբ համակրանք, հարգանք, գաղտնիություն և տեղեկացված համաձայնություն. (Դավիթ Ղազարյան)

2) Բուժաշխատողների փոխհարաբերությունները. գործընկերների, պացիենտների և նրանց ընտանիքների, երրորդ անձանց հետ, ինչպես նաև թիմային աշխատանքի նշանակությունը. (Նունե Զարաելյան)

3) Մասնագիտական պատասխանատվությունը. բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմի ապահովում, ինչպես նաև բժշկական գիտելիքների շարունակական ձեռքբերում. (Նունե Զարաելյան)

4) Բժշկական գաղտնիք համարվող տվյալները և դրանց պահպանման կանոնները. ինչպես պաշտպանել պացիենտների տվյալները և խուսափել էթիկական խախտումներից. (Լուսինե Հայրապետյան)

5) Իրազեկված համաձայնություն. բժշկական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ իրազեկված համաձայնության ստացման կարգը և առանձնահատկությունները. (Լուսինե Հայրապետյան)

6) Բուժաշխատողների մասնագիտական էթիկայի կանոնների խախտումները քննող հանձնաժողով. հանձնաժողովի գործունեությունը, վերջինիս կողմից կայացվող որոշումները և դրանց իրավական հետևանքները: (Վիոլետա Զոփունյան)

Լրացուցիչ/Փոխլրացնող բաղադրիչ (50 էջ տեքստ, 40 րոպե փոդքասթ, 12 րոպե վիդեոխնդիրներ)

7) Պացիենտակենտրոն մոտեցումը և արդյունավետ հաղորդակցումը ուռուցքաբանության ոլորտում. (Եվա Ասրիբաբայան)

8) «Օվիեդոյի կոնվենցիայով ամրագրված իրավունքահեն մոտեցումները առողջապահության ոլորտում» (Մերի Կատվալյան)

9) Առողջապահության թվայնացման էթիկական մարտահրավերները (Սուրեն Քրմոյան)

10) Էթիկայի նորմերի պահպանումը որպես բուժհաստատությունների որակի ցուցանիշ: (Դավիթ Ղազարյան)

Տեքստային և ձայնային նյութեր

Յուրաքանչյուր թեմա ներկայացված է տեքստային ձևաչափով, որին կից առկա են հարթակում տեղադրված ձայնային փոդքասթեր՝ նյութի ավելի դյուրին ընկալման համար:

Տեսաանիմացիաներ

Բովանդակությունն ամրապնդվում է իրադրային և իրավիճակային խնդիրներով, որոնք ներկայացված են վիդեոձայնագրությունների և անիմացիաների տեսքով: Այս խնդիրների պատասխանները նախապայման են լինելու տեքստի շարունակությանը հասանելիություն ունենալու համար:
Ինտերակտիվ հարցադրումներ
Ուսումնական նյութի հաջորդական հասանելիությունն ապահովվում է միայն ընթացիկ հարցերին ճիշտ պատասխանելուց հետո, ինչը երաշխավորում է մասնակցի լիարժեք ներգրավվածությունը:
Օժանդակ նյութեր
Տրամադրվում են նաև PPT սահիկաշարեր և մասնագիտական հղումներ:
Մասնակցության ճկունություն
Չկան ժամանակային խիստ պահանջներ. մասնակիցը կարող է մուտք գործել համակարգ և անցնել դասընթացը կամ նրա առանձին բաղադրիչը, երբ իրեն հարմար կլինի: Թեմատիկ տեքստերի, դրանց վերաբերյալ ձայնային փոդքասթերի, վիդեոհարցադրումների, ուսուցողական թեստերի միմյանց փոխկապված լինելը դասընթացի մասնակցության ճկունության հետ համատեղ ապահովելու են առավելագույն վերահսկելիություն այն հանգամանքի վրա, որ մասնակիցը քննությունը հաջող հանձնում է միայն ձեռք բերված գիտելիքների հիման վրա:

Թեստավորումը համարվում է հաջողությամբ անցած՝ 70% և ավելի ճիշտ պատասխանների դեպքում